38. ՓԱՐՈՒ

Մեկ զանկին մարդըմ կեր, անհրսապ տոլվաթ ուներ։ Գեղացինք դրին էդոր վըրեն, ասին. «Արի կարգվի, վաղ դու կմեռնիս, քու մալ կտանին ուրիշներ ուտին, թե օր չկարգվիս կնիկ չբերիսա»։

Էդ մարդն է, անկաճ չէրեց գեղացոց, ասաց.— Ես չըմ կարգվի։

Էդոր լէ մշակըմ կեր, հըմալ հազ կէներ էդ մշկուց օր չըր էղի, տախեմ օր չտեսներ, ուր աշխարհ կմթներ։

Էդ մշակն է, եր կիգեր աղի մոտ սահաթուն դիրըմ կհ՝ելներ, վազներ էրթեր ուր տուն ու դառներ հ՝իդեր։

Օրըմ էդ մշակն է զարկեց գնաց ուր տուն, տեսավ օր կնիկ ծանդրը կտքեր։

Ասեց.— Կնի՜կ, խեր էղնի, դու ի՞նչ հիվանդ ես։

Կնիկն ասեց.— Մարդ, ես շատ հիվանդ իմ, ճարն աստված է մանցի, ճարն վերի օշխրի միսն է, ֆըլան սար կա՝, օր չէրթաս բերիս ուտիմ սաղնամ, ես կմեռնիմ։

Մշակն է, հ՝էլավ առավ զուր թըվանք, հարցուց էդ սար, որ մեկն է, գնաց ու էդ սարուն տախիլ էղավ, իշքեց օր վերի օշխար քըռփ-քըռփ հ՝ընկեր շայիրներու մեշ ու կիգա։ Ինք տեսավ զօշխարն, օշխար չտեսավ զինք. ըգնշան բռնեց ու զարկեց, օշխար յարալու էղավ, էլ չկրցավ փախներ։

Վազեց վրեն, բռնեց, կտրեց զգլուխն ու առավ էկավ. էկավ,

անձրև տվեց վրեն, ըշկեավթըմ կեր, գնաց մտավ հ՚ինք։ Քիչմ կրակ էրեց ուրին, էփեց միս օր կուտեր, մեկ լէ կտեսնա օր կնիկ մարդըմ հ՚ելավ ուր հ՚առեք թըզըմ տվեր է բերնից դուրս, մեկ ցցվեր է վերևանց, մեկ լէ հ՚առջևանց աճեպտես մը։ Հայերեն կխոսա՝ ճուհապ չի տա, քրդերեն կխոսա՝ ճուհապ չի տա, արապի կխոսա՝ ճուհապ չի տա, ինչ գլուխ ցավանք էնինք, հար ինչ լեզու կխոսա, ճուհապ չի տա։

Քիչըմ հաց ու միս կուտե, քիչըմ լէ կդնե էդոր հ՚առջև կասի. «Զայիր, ճամբուց կիգա, էն լէ անոթի է», չի ուտե։ Մըշակ կքաշվի, կհ՚ելնի մեկդին կքաշվի, կնստի, մեկ լէ կտեսնա օր զակռեք զարկեց իրար ու դեմ էրեց զմշակ, էնի ուր ջանի ահուն կմտածի. «էն օր գիս սպանե, յավաշ ես սպանիմ զէդի». թըվանք կշիտկա զարկա կսպանա։ Մշակ օր զարկեց զէդի սպանի, բան օր էլավ էդոր բերնեն, իրեք հաղ պոռաց տղեկներուն, անունները տվեց. «Սայ՚թ, Ֆայ՚թ, Ըոբստա՚մ, արեք, ղիս սպանեցին»։

Իրեք լէ սիհլավորուկ հ՚ելան զմշակ բռնեցին։

Ասին.— Հա՚յ, մարդ դու զիմ մամ հ՚որի՞ սպանեցիր, ղողորդն ասե, ղողորդն չասես, ըզ քղիկ կըսպանինք։

Մարդ ջանդարդի էղեր էր, կըռնա՞ր օր ղողորդ չասեր։

Ասեց.— Իմ կնիկ հիվանդ էր, հ՚ուզեց վերին օշխրի միս, ասեց. «Օր չբերիս ուտիմ, ես կմեռնիմ»։ Հ՚ելա, առա զիմ սիհլաներն, էկա էդա սար, հ՚ըռաստ էկավ օշխարրմ, զարկի օր առնենք էրթենք։ էկա էդա տեխ, անձրև տվեց վրես, մտա էդա ըշկեավթի մեջ, էփի, քիչրմ քապապ օր ուտենք, մեկ լէ տեսնանք էդ կնիկ էկավ, տվի քիչրմ միս օր ուտեր, չկերավ, ասի զայիր, հ՚իսնե կամչնա, հ՚ելա քաշվա մեկ կողմ, ասի թող ուրին ուտե։ Ես օր քաշվա մեկ կողմ, մեկ լէ տեսնանք խփս էրեց ու էկավ հ՚իս, ես լէ ասի՝ «էն օր ղիս սպանե, ես կսպանիմ զինք». քաշեցի ըզթըվանք, զարկի սպանի։

— Օր հըմալ է,— ասին էդ տղեկներ,— մենք ըզքզիկ ազատեցինք, մնաց օր կէրթանք իմ պապու խեչ, օր էն լէ ազատ էրեց՝ աղեկ, թը չէ՝ ըզքզիկ կսպանինք։

Հ՚ընկան հ՚առեջ գացին, տեսավ օր էրիմ դուռ բացվավ, հալվորըմ կա նստուկ էդ տիվնի մեջ, չպուխ օր կքաջե, կէրթա հարի դռան հ՚ետև, նորհարս կնիկ մը չոքուկ վըր ճըղորին ըզճիժ կը

ծրծցու, ուր աղեն լէ նստուկ է հ՝ոդի, էրկու ճիժ կա վրր շոքերուն դրուկ, կխաղցու։

Մշակն է իշքեց էդա ուր աղի տրրուֆ, բրլե ասեց. «Իմ աղին ի՞նչ գործ կա հ՝ուդա, կարելի է ուրիշ մարդ». վերջապես շատ չերկարցունք, խելք կտրեց օր ուր աղեն է, քիչըմ սիրտ կանավ։

Եբ էկան մտան ներս, հ՝առջին հեղ հարցուց հալվորն.— Հայ մարդ, դու զիմ կնիկ հ՝որի՞ սպանեցիր։

Մարդն ասեց.— Օր իզին կա, կխոսամ, թե օր ընծիկ սուճըմ էղավ, քու հ՝առջև կանուկ իմ, կուզիս զգլուխս զարկ, կուզիս ազատ էրե։ — Տղեն ասաց,— Իմ կնիկ հիվանդ էր, ուզեց վերի օչխրի միս. հ՝ելա էկա ֆըլան սար, զարկի օչխարըմ օր առնենք էրթենք։ Գացի, անձրև տվեց վրես, ըշկեավթըմ մտա, մեկ լէ տեսնամ էնդիեն կնիկմ հ՝ելավ, ամեկ ակռեն կեր զիջում ճիլա վրրեն։ Միս ենք էփի, քիչմ կերա ես, քիչմ լէ տվի էդ կնկան։ Կնիկ չկերավ, ասի զայիր հիսնե կամչնա. քաշվա մեկ կողմ, ասի թող ուտե։ Ես օր քաշվա մեկ կողմ, մեկ լէ տեսնամ խփս էրեց ու էկավ վրես. ես տեսա օր էդ կնիկ զիս պիտի սպանե, զարկի թրվընքով ես սպանի զինք։

— Մատամ օր դու ղողորդն ասիր, հայտե, ես ազատ էրի ըզքզիկ, էն խավլով օր զիմ պզտիկ տղեն կդնիմ քու հետ, հ՝իգա քու տուն ու դառնա հ՝իդա։

Հալվորն է գրեց զուր տղեն էդ մարդու հետ, ճամբեց գնաց։ Եբ էկան հասան տուն, պզտիկ տղեն գնաց կարսիմ բերան բացեց, քիչըմ բամբակ վերուց կարսի էրսեն, տեսավ օր մարդմ կա մտուկ կարսի մեջ։

Ասեց.— Տղա, տե՞ս, քու կնիկ էդա մարդու հետ կնստեր, կաներ, ըղքզիկ մախսուս են ճամբած էդ սար, օր ըսպանվեր, չիդեր։ Բայց աստված խրլրսցուց բերեց։ Հմկա սուճ քու կնկան է, օր զիմ մամ ըսպանեցիր, կանի ես զէդ մարդն ու կնիկ ըսպանիմ, օր հեղրմ լէ հրմալ բան չէնին։

Քաշեց նետ վանեղ զարկեց, զէրկուս լէ սպանեց։

Էդոր վրեն մրթռավ, ու հ՝ելավ էկավ ուր աղի հ՝օդեն նստավ. իսկի չասեց, թե, ես ֆլան տեխն իմ գացի, իմ կնիկ սպանվեր է ու կը ֆքրեր։

Էրկու, իրեք օր հ՝ընցավ մեջ, նը աղեն բան կհարցուցներ մրշկուց, նը մշակ բան կասեր աղին։

Օրըմ հ'իրկուն էր, գեղացիք հ'ըմեն քոման էկան էդ աղի դիվան կծրխլեն։

Աղեն ասեց.— Հ'էսօր որն օր աղեկ մրժուլի դինա, թըղ էնէ օր հ'ընցունք։ Բըլե սուտ չասեք, ես հանդե գտնամ սուտն ու օղորդ։

Էն թալեց վըր էնդոր, էն վըր էնդոր, էկավ կանավ վըր էդ մշկոն։

Աղեն ասեց.— Մատամ օր հ'ըմենք քղիկ խրար տվին, հայտե բանըմ լէ դու ասե։

Մշակն է, էլ տեսավ օր յախա չկառնա աղատե, ասաց.— Ես ուրիշ բանըմ չըմ գինա, վրա չբռնեք, իմ բաշա կյոլտուղին է օր կասիմ ձըղիկ։ Օրըմ հ'ելա իմ աղի դիվնից, գացի մըր տուն, տեսա օր իմ կնիկ ծանդրը կտքեր, ասի. «Կնիկ, խեր էղնի, հ'որի՞ կտքաս»։ Ասեց. «Մարդ, հիվանդ իմ, կմեռնիմ, օր չէրթաս ֆըլան սար վերին օշխրի միս բերիս ուտիմ»։ Ելա առա զիմ թըվանք, դացի, հ'որի՞ն օր զիմ կնիկ շատ կուզինք, կասենք՝ արև չելնի հար իմ կնիկ հ'ելնի քնուց։ Գացի հասա էդ սար, տեսա օր վերին օշխար կարծեր, զարկի, առա էկա։ Մութն ու անձրև տվեց վրես, էկա, ըշկեավթըմ մտա, քիշըմ միս կտրի օր էնենք ընծիկ քապապ, ուտենք, մեկ լէ տեսա էնդիեն աճպատեսըմ հ'ելավ, ամեկ ակռեն կեր ըզհալապիմ։ Կտրի քիշմ միս, դրի էդոր հ'առջև օր ուտեր, չկերավ. ես կերա, քաշվա մեկ դին, ասի՝ «Զայիր կամշնա հիսնե, թըղ ուտե»։ Ես օր քաշվա ետ, մեկ լէ տեսնամ էդ կնիկ խփսին էրեց ու էկավ հ'իս։ Հ'իս օր էկավ, ասի. «Էն օր զիս սպանե, յավաշ ես սպանիմ զինք». քաշի ըզթըվանք, զարկի սպանի։ Բան օր տեսա, տեսա կնիկ իրեք անգամ կանչեց. «Սայա՛թ, Ֆայա՛թ, Ըռըստա՛մ, էկեք զիս սպանեցին»։ Էկան տղեկներ, հարցուցին հ'իսնե, ասին. «Ըզմեր մեր հ'որի՞ սպանեցիր». իմալ օր ձզիկ թարիֆ էրի, հմալ լէ տղեկներուն պատմեցի։ Էդոնք ասին. «Մենք ըզքզիկ ազատ էրինք, մնաց օր էրթանք մըր պապու խեչ, թե օր մըր պապ լէ ազատ էրեց ըզքզիկ, աղեկ, թը չէ՝ կզարկինք սպանինք»։ Առան գացին, մեկ լէ տեսա ըշկեավթիմ դուռըմ բացվավ. մտանք ներս օր հալվորըմ նստուկ, չրպուխն կէրթա դռան հ'ետև, կնիկմ լէ վըր օրոցին զճիժ կծծցու, մարդմ լէ նստուկ էր, իսկ կը մաներ իմ աղեն, էրկու ճիժ լէ վըր ծնկներուն, չըմ զինա ուր ի՞նչն էր, կխաղցուցներ։ Էդ հալվորն է ասաց. «Զիմ կնիկ հ'որի՞ սպանիր». իմալ օր տղեկներուն թարիֆ էրեր ենք, հըմալ

էդ հալվորուն թարիֆ էրի։ Հալվորն ասաց օր՝ «Դու զօղորդն ասիր, էլ քղիկ բան չկա, մինակ զիմ տղեն կդնիմ քու հետ հ՚իգա ըզքզիկ հ՚ընցու էդա տեղրանք, տանե քու տուն ու դառնա հ՚իդա»։ Հ՚ելանք էկանք մըր տուն, մեկ լէ տեսնամ, էդ տղեն գնաց բացեց կարսիմ բերան, քիչըմ բուրդ կար դրուկ վրեն, հանեց, տեսավ օր մարդըմ կա կարսի մեջ։ Դառձավ ընձիկ ասաց. «Զէ-դա մարդ կտեսնա՞ս, էդի քու կնկա սիրողն է. ըզքզիկ մախսուա ճամբած են էդ սար, օր սպանվեր, չիգեր, բայց աստված ազա-տեց։ Օր հըմալ է, էդ կնիկն է սապապ իմ մամու սպանելուն, կզարկիմ զէդ կնիկն ու մարդն կսպանիմ»։ Զարկեց, ղէրկուա լէ սպանեց։

Էկա աղի մոտ նստա, էրկու իրեք օր մանցի. նը էնի բան ի հարցուց հ՚իսնե, թե՝ «Դու հ՚ուր էր գացե էդա քանի օր չերևեր», նը ես հար էսօր պատմեցի։ Հըմկա դորն աղին է, զօղորդ պետք է ասե, էն ըշկեավթի միջուն ի՞նքն էր, թե ինք չէր։

Աղեն վերուց.— Ասիմ, դորն հըմկա իմն է, հ՚որի՞ պիտի զօղորդ չասիմ, իմ քսեն ի՞նչ կէրթա։ Էն կնիկն օր դու սպանե-ցիր, իմ զոքանչն է, էն իրեք տղեն օր ըզքզիկ բռնեցին բերին, ընդոնք լէ իմ աներձըգտանքն են։ Էն օր նստեր էր օսկի աթոռքի վրեն ու խալլոն կէրթեր չուրի դռան հ՚ետև, էն լէ իմ աներն է, էն էրկու էրեխեն օր իմ չոքերու վրեն դրուկ են, էն էրեխեքն օր ծիծ կիտեր էն նորհարս, էնդոնք իմ երեխեքն ին, էրկուսն տղա էր, ճղորի միջուն լէ ախչիկ էր։ Էն նորհարսն օր ծիծ կիտեր էրեխին, էն լէ իմ կնիկն էր։

Գեղացիք հ՚ըմեն շաշ մանցին, ասին. «Ջանըմ, իմալ էդա մշակ գացեր է զէդ ըշկեավթ գտի»։

Աղեն դառձավ գեղացոց ասեց, թե.— Դուք ընձիկ կասեք կարգվի, ես էն Փարու տերն ենք, չընք իշխընե կարգվի։

Մշակ դառձավ ասեց.— Օր չավտընա, հ՚ելեք էրթանք մըր տուն, տեսեք զիմ կնկա ու զէն մարդու ջանդակ լէ, չասեք սուտ է։

Կանչեց տարավ ըզդեղացիք ցուցուց, նոր ավտցան, օր մշկի ասածներն օղորդ է։

Նոր աղեն սաղեց, գնաց ուր կնկա խեչն էկավ, ասեց.— Էլ էդա տուն ընձիկ տուն չէղնի իմ տունն էն է. Փարուց չէր կռնար կտրեր։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մու-ըազին։